# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**2022 թվականի մայիսի 30-ից հունիսի 3-ը շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Գայանե Գաբրիելյանի Գերմանիայի Դաշնային Հանրապետություն (քաղաք Լայպցիգ) գործուղման արդյունքների վերաբերյալ**

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**
   Գայանե Գաբրիելյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**
   Լայպցիգ (Գերմանիայի Դաշնային Հանրապետություն)
   2022թ. մայիսի 30-ից հունիսի 3-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   Լայպցիգ քաղաքապետարան, Ջրերի և գետերի զարգացման ստորաբաժանում «Inland Waterways International» կազմակերպության հովանու ներքո

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**
   Մասնակցություն Ջրանցքների միջազգային համաժողովին (WCC):

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**
   Համաժողովի ընթացքում քննարկվել են.

- վերջին տասնամյակում Հայաստանի Հանրապետության ջրային ոլորտում առկա իրավիճակը և այդ համատեքստում բարեփոխումներին ուղղված կարևոր քայլերը,
- համագործակցության բազմաթիվ հնարավորությունները՝ ներառյալ փորձի փոխանակում պատասխանատու ընդերքօգտագործման, հանքարդյունաբերության, լքված հանքերի խնդիրների լուծման, ջրային ոլորտի, թափոնների կառվարման շուրջ,
- Ջրային ռեսուրսների համապարփակ կառավարումը՝ կլիմայի փոփոխության հարմարվողականության պլանավորման և ներդրումների կենտրոնում դասելու հարցը,
- ներդրումների խթանման կարևորությունը, որոնք ներառում են «բնական (կանաչ) ենթակառուցվածքների» կառավարում, վերականգնում և կայունության ապահովում՝ հիմնված տեխնիկական և թվային առաջընթացի վրա:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

#

Նախարարի տեղակալը համաժողովին հանդես է եկել բացման խոսքով, որում անդրադարձ է կատարվել Ջրանցքների միջազգային համաժողովի նշանակությանն ու կարևորությանը, անդրադարձ է կատարվել նաև վերջին տասնամյակում Հայաստանում ջրային ոլորտի բարեփոխումներին և գրանցված շոշափելի առաջընթացին: Ջրի արդյունավետ կառավարման և էկոհամակարգերի ստեղծման միջոցով առկա մարտահրավերներին դիմակայելու նպատակով առանձնացվել են այն կարևոր քայլերը, որոնք անհրաժեշտ է անել այդ համատեքստում:

Միջոցառման ընթացքում քննարկվել են կայուն զարգացման նպատակներին (ԿԶՆ) ուղղված քայլերը, աջակցությունը այնպիսի մասշտաբային միջոցառումներին, ինչպիսիք հնարավորություն կտան համադրել ջրհավաք ավազանի կառավարումը, կայուն ենթակառուցվածքները, ինչպես նաև հարմարվողականության մեխանիզմների միջոցով հզորացումը և իրազեկումը:

Ջրանցքների միջազգային համաժողովին տեղի են ունեցել հանդիպումներ մի շարք փորձագետների, գիտնականների, քաղաքականություն մշակողների, պետական կառավարման ներկայացուցիչների հետ: Կայացել են հանդիպումներ շրջակա միջավայրի, բնության պահպանության, միջուկային անվտանգության և սպառողների պաշտպանության Գերմիայի Դաշնային նախարարության պետական քարտուղար Դոկտոր Բետինա Հոֆմանի, հյուրընկալող Լայպցիգի շրջակա միջավայրի, կլիմայի, հասարակական կարգի և սպորտի գծով փոխքաղաքապետի Հեյկո Ռոզենթալի հետ:

## 8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունն այս համաժողովին մասնակցում էր անցյալ տարի աշնանը: Հանդիպման ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել, սակայն Լայպցիգ և Երևան քաղաքների միջև կնքված համագործակցության հուշագրի շրջանակներում քննարկվել է լքված հանքավայրերի ռեկուլտիվացիայի աշխատանքներում տեխնիկական աջակցություն ցուցաբերելու հնարավորությունը:

## 9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հանդիպման ավարտին կողմերը հույս են հայտնել, որ այս համաժողովը կդառնա այն հարթակը, որտեղ բոլոր մտքերն ու գաղափարները,

«ջրային մտածողությունը» կմիավորվեն՝ հաղթահարելու մեր փխրուն մոլորակի առջև ծառացած մարտահրավերները:

Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ՝

Գայանե Գաբրիելյան

06.06.2022թ.

###.

#